ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«13» հունիսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-62/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի 27.05.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 27.05.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ առհոս ջրի երկու հոսքից թթվածնի կենսաբանական և քիմիական պահանջարկի և նավթամթերքների հետազոտությունների ձեռքբերման նպատակով «ՀԱԷԿ-ԲԸԾՁԲ-1/16» ծածկագրով անցկացվող բաց ընթացակարգի հրավերը (գնման

առարկայի բնութագիրը) կազմված է թերի, բնութագրված է ոչ մասնագիտորեն, հստակ չի պարունակում գնման առարկայի պահանջվող ծավալը, ամբողջությամբ և հստակ չի նկարագրում ձեռքբերվող ծառայության հատկանիշները, և թույլ է տալիս դրանց այլընտրանքային մեկնաբանության: Հրավերով ներկայացված գնման առարկայի բնութագրում չկան պահանջվող ցուցանիշներ, չկան ծառայության որակին և ստանդարտին ներկայացվող պահանջներ:

Գնման առարկայի բնութագիրը պատճառ է դարձել մատուցվելիք ծառայությունների ծավալների և կատարման մեթոդների վերաբերյալ տարբեր ընկալումների: Հրավերով ներկայացված գնման առարկայի բնութագրի ծավալաթերթը ոչ առարկայական է և դրանում չի երևում մատուցվելիք ծառայության իրականացման փուլերը, այն ավելի շատ վերացական բնույթի է:

Ըստ Ընկերության՝ պատվիրատուի հրավերով ներկայացված գնման առարկայի բնութագիրը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերին:

Ընկերությունը խնդրել է դադարեցնել պայմանագիր կնքելու որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 02.06.2016թ. ժամը 17:30-ին ԳԲԽ-62/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի ներկայացուցիչները հայտնեցին, որ մրցույթում հաղթող ճանաչված ընկերությունը չհիմնավորված ցածր գնային առաջարկ է ներկայացրել, իսկ եթե հրավերով սահմանված գնման առարկայի բնութագիրը հստակ լիներ, մանրամասնորեն նկարագրվեին ձեռքբերվող ծառայությունների հատկանիշները, ապա կպարզվեր, որ հնարավոր չէ այդքան ցածր գնով կատարել նշված ծառայությունները:

<u>2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 03.06.2016թ. թիվ 40-1052 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերության բողոքն անհիմն է, քանի որ «ՀԱԷԿ-ԲԸԾՁԲ-1/16» ծածկագրով բաց ընթացակարգի հայտերի բացման նիստը նշանակված է եղել հայտարարության և հրավերի տեքստի հրապարակման պահից հաշված 43-րդ օրը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ

հոդվածով մասնակիցն իրավունք ուներ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում, ինչը մասնակցի կողմից չի արվել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 02.06.2016թ. ժամը 17:30-ին ԳԲԽ-62/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացուցիչները հայտնեցին, որ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագիրը կազմված է եղել հստակ, տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք չի տվել, իսկ բողոքաբեր ընկերությունը հրավերի պարզաբանում չի պահանջել և նույնպես մասնակցել է ընթացակարգին: Ինչ վերաբերվում է հաղթող ճանաչված ընկերության կողմից ներկայացված ցածր գնային առաջարկին, ապա ընկերությունը հայտնել է, որ իրենք ձեռք են բերել նոր սարքավորումներ, որոնք թույլ են տալիս նշված ծառայությունները կատարել այդքան ցածր գնով և նշված հիմնավորումը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

3. ԳԲԽ-62/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-62/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար առհոս ջրի երկու հոսքից թթվածնի կենսաբանական և քիմիական պահանջարկի և նավթամթերքների հետազոտությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԲԸԾՁԲ-1/16» ծածկագրով ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն և «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը:

2. «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի թիվ 4 հավելվածով 1-ին չափաբաժի համար ներկայացրած գնային առաջարկը կազմել է՝ 26,278,671 ՀՀ դրամ:

3. «ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի թիվ 4 հավելվածով 1-ին չափաբաժի համար ներկայացրած գնային առաջարկը կազմել է՝ 2,139,600 ՀՀ դրամ:

4. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար առհոս ջրի երկու հոսքից թթվածնի կենսաբանական և քիմիական պահանջարկի և նավթամթերքների հետազոտությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԲԸԾՁԲ-1/16» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև նաև՝ Գնահատող հանձնաժողով) 10.05.2016թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի նախահաշվային գինը կազմել է՝ 26,278,671 ՀՀ դրամ:

5. Գնահատող հանձնաժողովի 20.05.2016թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին թիվ 1 չափաբաժնով ճանաչել ընտրված մասնակից և առաջարկել կնքել պայմանագիր:

<u>4. ԳԲԽ-62/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի 27.05.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գրավոր դիրքորոշումը և ներկայացված փաստաթղթերը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար առհոս ջրի երկու հոսքից թթվածնի կենսաբանական և քիմիական պահանջարկի և նավթամթերքների հետազոտությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԲԸԾՁԲ-1/16» ծածկագրով ընթացակարգի հրավերը (այսուհետև նաև՝ Հրավեր), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), գտնում է, որ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի 27.05.2016թ. ներկայացրած բողոքը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա: (...)»:

Կենտրոնն արձանագրում է, որ բողոք բերող ընկերության կողմից, թե բողոքին կից ներկայացված նյութերով, թե բողոքը քննող հանձնաժողովի նիստի ընթացքում, որևէ ապացույց կամ փաստական տվյալ չի ներկայացվել այն մասին, որ Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագիրը կազմված է թերի, ամբողջությամբ և հստակ չի նկարագրում ձեռքբերվող ծառայության հատկանիշները, և թույլ է տալիս դրանց այլընտրանքային մեկնաբանություն: Ավելին, Կենտրոնը փաստում է, որ բողոք բերող ընկերության կողմից վերոհիշյալ իրավական հիմքով որևէ պահանջ (Օրենքի

պահանջների խախտմամբ կազմակերպված Ընթացակարգն ապօրինի հայտարարելու կամ Ընթացակարգը հայտարարելու մասին որոշումը դադարեցնելու) չի ներկայացվել, հակառակը՝ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել վերոհիշյալ գնման առարկայի բնութագիր ունեցող Հրավերով սահմանված Ընթացակարգին և միայն հետագայում բողոքարկել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի պայմանագիր կնքելու մասին որոշումը, մինչդեռ Ընկերության կողմից նշված Օրենքի 12-րդ հոդվածի ենթադրյալ խախտումը չի կարող հիմք հանդիսանալ Գնահատող հանձնաժողովի պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու որևէ իրավական հիմք առկա չէ:

Ինչ վերաբերում է Ընկերության՝ բողոքը քննող հանձնաժողովի նիստի ընթացքում հայտնած այն պատճառաբանություններին, որ մրցույթում հաղթող ճանաչված ընկերությունը չհիմնավորված ցածր գնային առաջարկ է ներկայացրել և հնարավոր չէ այդքան ցածր գնով կատարել նշված ծառայությունները, ապա Կենտրոնն արձանագրում է, որ Ընկերության կողմից, նշված իրավական հիմքով նույնպես, որևէ պահանջ (հաղթող ճանաչված ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը բավարար գնահատելու մասին որոշումը դադարեցնելու) չի ներկայացվել, և բացի այդ, հաղթող ճանաչված ընկերության կողմից ցածր գնով պայմանագրի կատարման հնարավորությունը վերաբերվում է Ընթացակարգի շրջանակներում կնքվելիք պայմանագրի կատարման փուլին, ուստի Կենտրոնը նշված հարցը քննարկման առարկա չի դարձնում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար առհոս ջրի երկու հոսքից թթվածնի կենսաբանական և քիմիական պահանջարկի և նավթամթերքների հետազոտությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԲԸԾՁԲ-1/16» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 20.05.2016թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ «ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին թիվ 1 չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու պահանջի

վերաբերյալ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի կողմից Կենտրոնին 27.05.2016թ. ներկայացված բողոքն անհիմն է և առաջարկում ենք այն մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ Մ.Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-62/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Դավթյան